

Lkn
✓ 101


1999



ԳԼՈՒԿ ԲԱԾԱԿ

Կամ

ՄԱՐԻՏ ԽՈՒՄԻ ՄԻՇՏ:



Լեռ
101

Մ Ո Ս Կ Վ Ր . — 1882 .

Handwritten signature

ՄԻՍԵՆԵՅ ԲԵԺԵՈՒ


4 0 0

8-3

ՆՇԱՆՆԻՏ ԽՕՍԻՐ ՄԻՇՆ *(Handwritten note)*

Թարգ. Օր. Մար. Եկիմեանի:

1657



МОСКВА.

Тип. быв. А. В. Кудрявцевой, Мясницкая. д. Сытова.

1882.

ԱՐԾԱԹԵԱՅ ԻՆԺԵՆ

կամ

Ճ Ղ Մ Ա Ր Ի Տ Խ Օ Ս Ի Ր Մ Ի Շ Տ .



Մարիկ Մարիամ Տիգրանեանը մի հա-
տիկ դուստրն էր իւր ծնողաց. նա
ստացել էր իւր անունը ի պատիւ
իւր մեծ մօր, որ նորան շատ սիրում էր: Մի
անգամ մեծ մայրը նորա ծննդեան տարեդար-
ձին ընծայ ուղարկեց նորան մի գեղեցիկ
արծաթեայ բաժակ: Բաժակը ծանրակշիռ
էր և գեղեցիկ զարդարած. նորա վերայ փո-
րագրած էր Մարիամի անունը և նորա ծնն-
դեան թիւը: Նորա մայրը մեծ զգուշու-
թեամբ պահպանում էր այդ գեղեցիկ բա-

ժակը և թոյլ չէր տալիս յաճախ գործածել նորան որ չը ջարդեն և չը փչացնեն:

Տիկին Տիգրանեանը ունէր մի գեռահաս աղախին՝ Ատտարինէ անուն: Գա մի շատ ուրախ և բարի աղջիկ էր և շատ սիրում էր երեխաներ: Ուր և լինէր նա իւր գործով, Մարիամ միշտ խաղում էր նորա մօտ, կամ թէ, Ատտարինէին օգնելու առիթով, լսում էր նորա պատմութիւններն ու երգերը: Ատտարինէն շատ առաջներ և երգեր գիտէր: Մի անգամ Տիգրանեանը յանձնեց նորան սրբել արծաթեայ բաժակը: Կա, նստած խոհանոցի դրան մօտ, սկսաւ սրբել Մարիամը, ինչպէս սովոր էր, պտոյտ էր գալիս նորա չորս կողմով և մի կապերտ ձեռքին օգնում էր նորան այդ գործի մէջ: Արծեմ որ ոչ որ չէր կարող աւելի երջանիկ լինել քան այս երկու աղջիկները, երբ դռքա պարապում էին միասին: Մարիամի լեզուն չէր դադարում խօսելուց, իսկ Ատտարինէն նորան պատասխա-

նում էր և երկուքն ևս ամէն մի բառի վերայ ծիծաղում էին:

Խոհանոցի դրան մօտ կար մի շատ խոր ջրհոր. նորանից ջուր էին հանում ջրհանով: Խոհարարը նոր էր ջուր հանել և թողել էր սափորը այն տախտակի վերայ, որ ներսից շրջապատում էր ջրհորը: Ատտարինէն գնացել էր առն մի բանի համար. իսկ Մարիամը վազեց դէպի ջրհորը և, կանգնելով ոտքի ծայրերի վերայ, նայում էր սափորի մէջ: Զուրը այնպէս մաքուր և պարզ էր որ նա կամեցաւ խմել: Բայց որքան լաւ կը լինէր խմել իւր սեփական գեղեցիկ արծաթեայ բաժակից, բաժակը առնել և կրկին դառնալ մի լուսէի գործ էր Մարիամի համար: Կա հալիւ հազ հանում էր ջրհորի բերանին. ոտքի ծայրերի վերայ կանգնած՝ փորձ էր փորձում ընկրմել բաժակը սափորի մէջ, երբ յանկարծ լսեց մօր ձայնը, որ կանչում էր. «Մարիամ, ուր ես, Մարիամ:» Գիտէր Մա-

րիամ որ վատ բան էր արել, վերցնելով բա-
ժակը առանց մօր թոյլտուութեան, վախե-
ցաւ, որ մայրը կը տեսնէ և կը բարկանայ նո-
րա վերայ, երկիւղեց թողեց բաժակը ձեռ-
քից, որ ընկաւ ուղղակի ջրհորը, գարկուե-
լով ջրհորի քարեայ պատերին. յետոյ լսեց
նա ջրի սրսկումն և իմացաւ որ իւր գեղեցիկ
բաժակը դիպաւ ջրհորի յատակին:

Ինչպէս ինայեց նա որ վերցրել էր բա-
ժակը, բայց շատ փոքր ժամանակ էր մնում
մտածելու, որովհետեւ Աստարինէն վերա-
դարձաւ և շտանելով բաժակը ազդարակեց
„՛հ Աստուած, Մարիամի բաժակը կը-
րաւ: Մարիամ, Մարիամիկ, դուք չէք վը-
րել բաժակը“:

Այժմ, իմ ընկերներ, մտածեցէք ինչ պատ-
էր անել այդպիսի դէպքում: Եթէ դուք
ինքներդ չէք գուշակում, ուրեմն ես կ'սամ
ձեզ մի բարի խորհուրդ. եթէ դուք միշտ
հետեւէք նորան, ազատ կ'լինիք շատ վշտե-

րից: Ահա՛ նախեւ յառաջ ճշմարիտ խօսիր և մի
մտածեր թէ ինչ հետեւանք կ'ունենայ այդ:
Բայց փոքրիկ Մարիամը չգիտէր մտածել, այն
ինչ Աստարինէն առաջարկեց հարցմունքը,
նա իսկոյն միտք բերեց թէ ինչպէս նորա վե-
րայ կը բարկանան անհնազանդութեան հա-
մար, պատասխանեց. „Ոչ, չեմ վերցրել“:

Իսեղձ՝ Աստարինէն, շատ վրդովուած, վա-
զեց հարցնելու խոհարարին և միւսներին,
արդեօք չտեսա՞ն նորա Մարիամի բաժակը.
ամենեքեան պատասխանեցին, որ չը տեսան
այն ժամանակից, մինչ նա սրբում էր նորան
նտարանի վերայ: Աստարինէն սկսաւ դառ-
նապէս լալ, ասելով. „Աստուած իմ, տիկինս
կը բարկանայ իմ վերայ և կը կարծէ որ ես
եմ առել բաժակը“: Այս լսելով Մարիամը
տխրեցաւ և ինայեց որ ճշմարիտն չասաց,
բայց այժմ արդէն նա չէր կամենում խոստո-
վանել իւր ստախօսութիւնը և լռեց:

Տեսնում էք, իմ ընթերցողներ, որ մի վատ

վարմունք բերումէ իւր հետ և միւսը : Օգաց Մարիամը որ վատ էր արել վերցնելով բաժակը առանց հարցնելու և որպէս զի փրկէ իրան պատժից, նա սուտ խօսեց. յետոյ կամեցաւ նա իւր յանցանքը զնել ուրիշի վերայ և չը համաձայնեցաւ խօստովանել իւր վատ վարմունքը :

Նորա մայրը, երբ տեղեկացաւ բաժակի կորստեան մասին, շատ վազուկուեցաւ, ոչ միայն նորա համար, որ նա թանգ արժէր և Մարիամի մեծ մօր ընծան էր, այլ որ իւր տան մէջ գտնուեցաւ մի մարդ, ընդունակ այդպիսի վառթար գործի, ինչպէս գողութիւնն էր : Նա հաւաստի էր որ խոհարար Սառան, որ շատ ժամանակ նորա մօտ էր բնակում, չէր վերցնի ոչ մի գնդասեղ, և ոչ մի բան որ նորան չէր պատկանում : Իսկ բացի Ատարինէից և Մարիամից ոչ ոք չկար, և նա չգիտէր ինչ մտածէր : Խոհարարն ասում էր, որ Մարիամը, ինչպէս ինքն ասումէ,

ձեռք տուած չէ բաժակին. իսկ մայրն երբէք չէր նկատել իւր աղջկայ մէջ հակումն դէպի ստախսութիւն : Բացի այդ, Մարիամը ոչ մի առիթ չունէր թաղցնել իւր գեղեցիկ բաժակը որ շատ սիրելի էր նորան : Եւ այսպէս մնում էր միայն կասկածել Ատարինէի վերայ : Այստեղ, Տիգրանեանի միտքը եկաւ իւր լաւ խօսակցութիւնը բաժակի մասին այս երկու աղջկանց մէջ : Մարիամը ասաց. « Ինչպէս գեղեցիկ բաժակ է, այնպէս չէ՞ Ատարինէ » : Եւ Ատարինէն պատասխանեց. « Այո, շատ գեղեցիկ է և շատ փող արժէ, ընծայեցէք ինձ : Ես շատ ուրախ կլինէի այսպիսի մի բաժակ ունենալ » : Եւ այս ստիպում էր մտածել որ Ատարինէն ցանկանումէր ձեռք բերել բաժակը, և նա թաղցրել է այն մտքով մինչև որ մի յարմար զիպուածում վաճառէ :

Տիկին Տիգրանեանն այդ մասին խօսեց իւր ամուսնու հետ. նոքա վճռեցին հեռացնել

աղախինք, անյարմար համարելով իւրեանց մօտ պահել այնպիսի մի աղախին, որ վատ օրինակ էր լինում Մարիամին. և թէ մի բան կորչելու ժամանակ այս աղախնու վերայ միշտ կ'ընկնի կասկածանքը: Տիկին Տիգրանեանք իւր մօտ կոչեց Աստարինէին, երկար ժամանակ խօսում էր նորա հետ և տալիս էր նորան բարի խրատներ: Բայց և այնպէս յայանեց թէ չէ կարող պահել այնպիսի մի աղախին, որին կասկածում են այդ տեսակ վարմունքի մէջ: Կա խնդրեց որ Աստարինէն յայանէ թէ ինչ է արել բաժակի հետ: Բայց Աստարինէն արտասուքը աչքերին հաւատացնում էր որ չէր տեսել բաժակը այն ժամանակից, մինչ թողնելով այն նստարանի վերայ, ինքն գնացել էր կաւիչ բերելու, որով սրբում էր արծաթեղէնները:

Մարիամը խաղում էր գաւիթում և ամենեւին չգիտէր ինչ որ տան մէջ պատահած էր, մինչև որ մօտեցաւ Աստարինէի

սենեակի դռներին և տեսաւ որ դռները փակած էին: Կա սկսաւ կանչել Աստարինէին, պատասխան չը ստացաւ. և ապա ականջ դնելով, լսեց հեկեկանքի ձայն. աղաղակեց. «Աստարինէ, Աստարինէ. թոյլ տուր ինձ մտնել քո սենեակը. ինձ շատ հարկաւոր է տեսնել քեզ»: Ե. յն ժամանակ դռները բացուեցան, և խեղճ Աստարինէն դուրս եկաւ, ղենջակով ծածկեց աչքերը և հեկեկալով, կարծես նորա սիրտը պատրաստ էր պատռուելու: Նորա արկը բաց դրած էր յատակի վերայ, և բոլոր շորերը թափած էին նորա շուրջը. նստաւ նա յատակի վերայ և կրկին գլուխը ծնկան վերայ դնելով և այս ու այն կողմ ծօծուելով սկսաւ դառնապէս լալ: Ե. յս անանելով Մարիամը, ինքն ևս սկսաւ լալ: «Ի՞նչ պատահեցաւ քեզ Աստարինէ՛ հարցրեց նա: «Ո՛հ, խեղճ մայր», ասաց Աստարինէն. «Միթէ մայրը փախճանն է, հարցրեց Մարիամը. «Ո՛չ, պատասխա-



նեց, բայց նա մահ կը ցանկայ երբ որ բէ թէ իւր զուսորը արտաքսած է մի ազնիւ տանից գողութեան պատճառաւ: Մօրս վերջին խօսքն այս էր. «Պատարինէ, Ճշմարիտ խօսիր միշտ, երբէք թոյլ մի տար. քեզ մի բառ անգամ սուտ ասել և երբէք մի վերցրու մի գնդասեղ անգամ որ քեզ չէ պատկանում: Զիշիր Աստուծոյ պատուիրանքը: Ո՛հ, ինզձ մայր. ի՞նչ պէտք է ասէ նա»: «Միթէ դու մեզանից հեռանումես, Պատարինէ, դու չը պէտք է գնաս», ասաց Մարիամ: «Այո, ես պէտք է գնամ: ձեր մայրը արտաքսեց ինձ: Կա կարծում է, որ ես եմ գողացել ձեր արծաթեայ բաժակը: Բայց ես այնքան գիտեմ այդ բաժակի համար որքան և դուք, այս նոյնչափ ակներև ճշմարտութիւն է որչափ և այն՝ որ ես սպրումեմ աշխարհիս վերայ»: «Եթէ այդպէս է, Պատարինէ, ուրեմն բաժակի համար ես քեզանից աւելի գիտեմ», բացական-

չեց Մարիամը: Այլ ևս մի լաց լիներ, սիրելի Պատարինէ: Աս ուղղակի կ'երթամ մօրս մօտ և կ'ասեմ նորան ճշմարիտն: Առաւել լաւ է որ ինձ պատժեն, քան թէ տեսնեմ ես քո արտասուքը, և իմանամ որ քեզ արտաքսել են»: Այս ասելով, Մարիամը վազեց մօր սենեակը, փաթաթեցաւ նորա վզով և, պինդ գրկելով նորան, ասաց. «սիրելի մայր, մի արտաքսեր Պատարինէին: Աս ինքս վերցրի իմ արծաթեայ բաժակը, որ նորանով ջուր խմեմ, բայց իմ անզգուշութիւնից ընկաւ ձեռքիցս ջրհորի մէջ, իսկ յետոյ վախեցայ խոստովանել այդ»:

Մեծ անբաւականութեամբ նայեցաւ մայրը Մարիամի երեսին, և ասաց. «Աս շատ գոհ կը լինէի, եթէ դու դայիւր քո ներքին համոզմամբ և յառաջագոյն պարզ սրբտով խոստովանէիր, քան թէ այժմ, Պատարինէի յուսահատութիւնից ստիպուած: Այդ որդր զործը մեծ անհանգստութիւն պատ-

ճառեց ինձ. բայց ամենամեծ վիշաւ այն է՝ որ իմ հարազատ դուստրս այդպէս վատ վարմունք ունեցաւ, իսկ խեղճ Պատարինէն գուր ատղ մեղադրանքի ասկ ընկաւ: Գնանք, մենք պէտք է ասենք Պատարինէին, ով էր այդքան աղմուկի պատճառն: «Ո՛հ, սիրելի մայր, ես սուտ խօսեցայ և շատ ու շատ ինայում եմ այդ մասին»:

«Այժմ Վարիամ, ես պահանջում եմ քեզանից որ դու ինքդ պատմես հօրդ և եղբայրդ բոլոր անցքը թէ ինչպէս դու բաժակը ձգեցիր ջրհորը. թող նոքա վճռեն ինչպէս պէտք է քեզ պատժել»:

Այս մի դառն փորձառութիւն էր Վարիամի համար, բայց նա գիտէր որ պարտական էր խոնարհել մօրն, որ երբէք չէր խօսում առանց մտածելու. Վարիամը խոստովանում էր, որ իւր մօր պահանջը արդարացի էր, ուստի ոչ այլ ինչ մտումէր նորան, եթէ ոչ կատարել որ ինչ արժանն էր:

Պատարինէն, ինչպէս և դուք ինքներդ կարող էք գուշակել, շատ երջանիկ էր, տեսներով որ իւր անմեղութիւնն յայտնուեցաւ, և թէ ինքն կը մնայ այդ ասն մէջ, բայց ատրեցաւ Վարիամի համար և ապշած մնաց, երբ լսեց որ այդ փոքրիկ աղջիկը համոձայնել էր մի այդպիսի յանցանք դործել:

Այդ միջոցին Վարիամի եղբայրքը լսեցին այդ անցքի պատմութիւնը և ծածուկ խրնդրեցին իւրեանց հօրը հանել առ կորուսած դանձր: Մի և նոյն օրը, Վարիամի բացակայութեան ժամանակ, կանչեցին ջրհորափորին, որ իջաւ ջրհորի մէջ և մի բոպէում մի փայլուն բան ձեռքին դուրս եկաւ: Վարիամի եղբայրքը ծափահարեցին ուրախութիւնից և բացականչեցին. «բաժակը գրտնուեցաւ, հայրիկ, բաժակը գտնուեցաւ:»

Այլ արդարեւ բաժակը գտնուեցաւ. բայց որչափ մեծ էր աղայոց զարմանքը, երբ տեսան նոքա բաժակը ջարդած և ծռւնած.

1657.

այդ պատահել էր բաժակի վայր ընկած ժամանակին, երբ մինչև յատակին հասնելն բանիցս զարկուել էր ջրհորի պատերին:

Մի և նոյն օրը, երբ Մարիամ խոստովանեց իւր յանցանքը, երեկոյեան պահուն բոլոր ընտանիքը սովորաբար հաւաքուեցան թէյի ժամանակ և հայրն, նստացնելով Մարիամին իւր ծնկան վերայ, ասաց. «Յոյս ունիմ, որ իմ աղջիկս խելացի և լաւ աղջիկ էր այսօր: «Նա պատասխանեց. «Ա՛յ, հայրս, ես անպիտան աղջիկ էի, և մայրս պատուիրեց ինձ բոլորը պատմել ձեզ:» Վառն արտասուքով և ամօթուց կարմրելով, Մարիամը պատմեց բոլորն իսկութեամբ, ինչ որ պատահած էր: Աղբալքը շատ սիրում էին նորան, համարումէին որ նա բաւական պատժուած էր, և չէին կարող հաշտուիլ այն մաքի հետ թէ նորան այլևս հարկաւոր էր չարչարել. բայց հայրն ասաց որ վախենում է անպատիժ թողնել այդպիսի մի սարսափելի

յանցանք. առաջին յանցանքը Մարիամի, որ նա ձգեց բաժակը ջրհորի մէջ, այնքան մեծ չէր, եթէ նա սոււ ա չխօսէր և կաժակոր չլինէր իւր սխալմունքի մէջ, և նա վախենում էր որ չլինի թէ Մարիամը մի և նոյն կերպով շարունակէ և ժամանակով դառնայ մի յայտնի սաախօս, եթէ այժմ ոչինչ չանենք որ յիշեցնէր նորան իւր վատ վարմունքը: «Ամենաճիշդ պատիժը, որ ես կարող եմ մտածել, այն է, որ Մարիամին թողնենք միայնակ տան մէջ, երբ մենք բոլորեքեանս կ'երթանք քաղաքից դուրս մեծ մօր մօտ ամառանոց:»

Այդ չէր սպասում խեղճ Մարիամը, որ սովոր էր միշտ ամառուայ ատները մեծ մօր գեղեցիկ ամառանոցում անցուցանել: Սովորաբար երբ գնումէր ամառանոց, նա մի քանի շաբաթ շարունակ բաց ի իւր զուարճութիւններից ուրիշ բանի վերայ չէր խօսում. նա այժմ կրկին լաց եղաւ և եղբալքը նոյնպէս նորա հետ լալիս էին: «Նօրա սկսան

ողաչել Հօրը առնել Մարիամին իւրեանց
Հեռ մեծ մօր մօտ: «Միրելի Հայրիկ, ասում
էին նորա, ոչ մէկը մեզանից ուրախ լինելու
չէ, եթէ Մարիամը մնայ տանը: Մենք Հա-
ւաստի ենք որ նա կ'ուզուի, նա շատ գրջա-
ցել է, սիրելի Հայր, մենք նորա համար պա-
տասխանատու ենք և ամենքս կ'աշխատենք
մեզ լաւ պահել»: Պատասխանեց Հայրն.
«Թող Մարիամը ինքն ընտրէ: Պիտե՞ս դու,
Մարիամ, որ մենք գնալու ժամանակ միշտ
վերցնում էինք մեզ հեռ արծաթեայ բա-
ժակը, որ ցոյց տայինք մեծ մօրդ թէ ինչ-
պէս դու պահպանում ես այն: Իսկ այժմ,
կամ պէտք է դու մնաս տանը, կամ եր-
թաս մեզ հեռ մեծ մօր մօտ, և ինքդ
պատասխանատու լինիս, երբ նա հար-
ցանէ, որտեղ է քո բաժակը»: Սակաւ ինչ
տարակուսելուց յետոյ, զիջանելով եղբարց
աղաչանքին, Մարիամը վերջապէս վճռեց
գնալ մեծ մօր մօտ: Բայց այնպէս վախե-

նում էր մեծ մօր յանդիմանութիւնից, որ
հազիւ կարողացաւ սիրտ առնուել, երբ հա-
սաւ գնալու ժամանակը:

Արուսած բաժակը գտնուեցաւ, բայց
Մարիամը ոչինչ չգիտէր այս մասին և կար-
ծումէր թէ դեռևս ջրհորի խորքումն էր:
Եւ ահա հասաւ գնալու օրը, և ամենքը
ուրախանումէին բացի խեղճ Մարիամից.
նա առաջին անգամն էր որ օխրութիւն էր
զգում ամարանոց գնալուց յառաջ:

Շատ ուրախացաւ մեծ մայրն, երբ տե-
սաւ նոցա ամենքին, և հազիւ թէ նորա
զլիարկներն հանած էին, մինչ կանչեցին
նոցա ճաշի, որ վաղուց արդէն պատրաստած
էր: Ինչպէս զարմացաւ Մարիամը երբ տե-
սաւ իւր արծաթեայ բաժակը, դրած սե-
ղանի կահերի հետ, իւր ամանի մօտ, նոյն
և նման ողորկ և փայլուն, ինչպէս որ էր
այն օրը, երբ ընծայեցին նորան: Բաժակը
լի էր մաքուր և պարզ ջրով: Եւս առաւ

ձեռքը որ լաւ քննէ, արդեօք ճշմարիտ իւր բաժակն է: Այո՛, ահա նորա անունը, „Մարիամ Տիգրանեան“ և ցածում մի բան էր աւերացրած, որ յառաջ չկար, նա կարգաց „Ճշմարիտ խօսիւր միշտ“:

„Տեսնում եմ, ասաց մեծ մայրն որ Մարիամի բաժակը նոյնպէս լաւ է, ինչպէս և յառաջ. ինձ շատ հաճելի է, որ նա հոգացողութիւն ունի նորա մասին“:

Այժմ հասել է ժամը, մտածում էր Մարիամը, և ասաց. „Մեծ մայր, այս բաժակի մասին ես պէտք է ձեզ պատմեմ մի օխուր անցք“: Նա պատմեց մեծ մօրն իւր անլուրջութեան և ստախսութեան բոլոր պատմութիւնը, չաշխատելով ամենեւին ներողամիտ լինել դէպի ինքն: Նա վերջացրեց իւր խօսքը այսպէս. „Բայց մեծ մայր, ես իբրև սրտէ զղջացել եմ այն ժամանակից, և ամենայն օր աղաչում եմ Աստուած որ ներէ ինձ և պահպանէ ամենայն չար բաներից“:

Շատ ախրեցաւ մեծ մայրն, երբ լսեց այդ անախորժ պատմութիւնը և երկար ժամանակ խօսում էր Մարիամի և նորա եղբարց հետ. „Նայեցէք, ասաց նա, ինչպէս մի մեղք սաստիկ ախրեցրեց շատերի սիրտը: Ինչ՞ դ՛ Աստարինէ, որքան չարչարուեցաւ նա զուր մեղադրանքից, տեղեց զրկուելու հոգսից: Ի՛նչպէս վշտացած էին Մարիամի ծնողքը և եղբայրքը: Ինչպէս անբախտ էր նա ինքն, և ինչպէ՛ս ախրեցրեց իւր մեծ մօրն. բայց ամենամեծ մեղքը այն էր որ նա վշտացրել էր իւր Արկիաւոր Զօրն: Սակայն ես ուրախանում եմ որ նա ըզգում է իւր սրտում մի անհրաժեշտ կարիք՝ Նորանից թողութիւն գտնելու և կարծում եմ որ Մարիամը երբէք մօռանալու չէ այդ անցքը, և այդ փստ փարսունքը առաջինն էր և կը լինի վերջինն“:

Միրելի է ինձ ասել ձեզ, իմ ընթերցողներ, որ մեծ մօր կնիթաղբութիւնն կա-

տարուեցաւ: Մարիամը մեծացաւ, մի ազ-
նիւ և ճշմարտախօս ազջիկ դարձաւ, մար-
դու գնաց և ունի այժմ իւր փոքրիկ ըն-
տանիքը: Աորա ասն մէջ ամենայայտնի տե-
ղում դրած է մեծ մօր ընծան, և նա, ցոյց
տալով այն իւր գաւակներին, յիշումէ «Ար-
ծաթեայ բաժակի» պատմութիւնը, և յոր-
դորումէ նոցա միտ բերել միշտ բաժակի
վերայի գրուածքը՝



« Ազգային գրադարան



NL0242261

